

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Զեր 07.12.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ 2020թ. ճշտված բյուջեով՝ թեքահարթակների կառուցման մասով, նախատեսված է 23,800.0 հազ. դրամ, որի փաստացի ծախսը 18.12.2020թ. դրությամբ կազմում է 6,717.9 հազ. դրամ:

Երևան համայնքի 2021թ. բյուջեով՝ նույն ծրագրի մասով, նախատեսվում է 22,528.0 հազ. դրամ, իսկ ընդհանուր մատչելիության ծրագրերի մասով, կոնկրետ մատչելիության այլ ծրագրեր նախատեսված չեն, սակայն յուրաքանչյուր քաղաքային շինարարական աշխատանքում կախված նախագծերից, հնարավոր են նաև մատչելիության աշխատանքների ընդգրկում:

Շենգավիթ վարչական շրջանում 2020թ. թեքահարթակների կառուցման աշխատանքների նպատակով «Կասա կառուցապատում» ՍՊԸ-ի հետ 15.10.2020թ. կնքվել է ԵՔ-ԳՀԱՇԶ-20/140 պայմանագիրը, կատարված աշխատանքների նկատմամբ հսկողություն իրականացնելու գծով՝ «ՄՄՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի հետ՝ 07.12.2020թ. ԵՌ-ԳՀԽԾԶԲ-20/129 պայմանագիրը և հեղինակային հսկողության իրականացման նպատակով՝ «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ի հետ՝ 02.11.2020թ. ԵՔ-ՄԱԾԶԲ-20/114 պայմանագիրը: Կառուցվել է թվով 32 թեքահարթակ՝ Արշակունյաց պողոտայում, Մանթաշյան, Մանանդյան, Շիրակի փողոցներում, Գ. Նժդեհի և Մանթաշյան, Մայիսի 9-ի և Չեխովի, Մանանդյան և Մանթաշյան, Շիրակի և Արտաշիսյան, Շիրակի և Շարուրի փողոցների խաչմերուկներում: Աշխատանքները դեռևս շարունակվում են: Մեկ քմ թեքահարթակի միջինացված արժեքը կազմում է 23,350 ՀՀ դրամ (1 հատի միջինացված արժեքը շուրջ 100.000 ՀՀ դրամ):

2021թ. նախատեսված է Շենգավիթ վարչական շրջանի տարածքում կառուցել 180քմ թեքահարթակ (շուրջ 48 հատ):

Կենտրոն վարչական շրջանում 20.07.2020թ. կնքված թիվ ԵՔ-ԳՀԱՇԶԲ-20/92 պայմանագրով «Գայսաթ» ՍՊԸ-ն կառուցել է թվով 22 թեքահարթակ հետևյալ հասցեներում՝ Արգիշտիի փողոց /6 թեքահարթակ/, Խանջյան-Նալբանդյան փողոցների խաչմերուկ /2 թեքահարթակ/, Նալբանդյան փողոց /4 թեքահարթակ/, Հանրապետության-Արամի փողոցներ /2 թեքահարթակ/, Քոչինյան փողոց /2 թեքահարթակ/, Սայաթ-Նովայի պողոտա-Խանջյան փողոց /2 թեքահարթակ/, Մարկ Գրիգորյան փողոց /2 թեքահարթակ/, Չարենցի փողոց /2 թեքահարթակ/:

2021թ. բյուջեով նախատեսվել է կառուցել թվով 40 թեքահարթակ: Կառուցման աշխատանքներն իրականացվում են պատվեր-առաջադրանքի հիման վրա՝ համաձայն պայմանագրի տեխնիկական բնութագրի 2-րդ կետի:

Արաբկիր վարչական շրջանում 2020թ. թեքահարթակների կառուցման աշխատանքների համար չորս անգամ հայտարարվել է աշխատանքների գնման մրցույթ, սակայն մասնակից չլինելու պատճառով մրցույթը չի կայացել:

2021թ. նոր թեքահարթակների կառուցում նախատեսված չէ, սակայն նախատեսված է ընթացիկ վերանորոգման ենթարկել Կոմիտասի, Բաղրամյան, Ազատության պողոտաների, Խաչատրյան, Հակոբյան, Մամիկոնյանց, Տիգրանյան, Ավետիսյան, Սունդուկյան և Քոչարի փողոցների թվով 76 թեքահարթակները:

Աջափնյակ վարչական շրջանում 28.07.2020թ. կնքված թիվ ԵՔ-ԳՀԱՇԶԲ-20/92 պայմանագրով «Գայսաթ» ՍՊԸ-ն իրականացրել է թեքահարթակների կառուցման աշխատանքներ հետևյալ

հասցեներում՝ Մելքումովի փողոց /3 թեքահարթակ/, Բաշինջաղյան փողոց /4 թեքահարթակ/, Մարգարյան փողոց /1 թեքահարթակ/, Աբելյան փողոց /1 թեքահարթակ/, Շինարարների փողոց /2 թեքահարթակ/, Լենինգրադյան փողոց /2 թեքահարթակ/, Լենինգրադյան-Հասարթյան փողոցների խաչմերուկ /2 թեքահարթակ/, Շիրազի փողոց /3 թեքահարթակ/:

2021թ. նախատեսված է մոտ 20 թեքահարթակի կառուցում՝ փողոցների անցումներում և մայթեզրերում: Հասցեները ճշտման փուլում են:

Ավան վարչական շրջանում 2020թ. կառուցվել է թվով 10 թեքահարթակ հետևյալ հասցեներում՝ Բաբաջանյան փողոց /3 թեքահարթակ/, Ալմա-Աթայի փողոց /4 թեքահարթակ/, Ավան Առինջ թաղ. 1-ին մկշ. /2 թեքահարթակ/, Տաշքենդի փողոց /1 թեքահարթակ/: Թեքահարթակի կառուցման միավոր արժեքը 1 քմ-ի համար կազմում է 28.000 դրամ: 2021թ. նախատեսվող նմանատիպ աշխատանքները գտնվում են նախագծային փուլում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Նուբարաշեն, Նորք-Մարաշ, Նոր Նորք, Էրեբունի, Քանաքեռ-Զեյթուն, Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում 2020թ. թեքահարթակների կառուցման աշխատանքներ չեն իրականացվել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ